**ԱՓ 08/04-06**

# Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒԹՂ

# ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 1994-2003 թթ.

*Հեղինակներ՝*

*Հարություն Սարգսյան, Վարդան Արամյան*
Դրամավարկային քաղաքականության վարչություն

ԵՐԵՎԱՆ 2004

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3
ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ..... 4
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆԺԱՄԿԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ..... 8
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 11
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ..... 11
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏ ..... 12
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 23

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զարգացող և անցումային շատ երկրներում առաջնային հիմնախնդիրը եղել և մնում է բարձր գնաճի նվազեցումը: Ի տարբերություն ցածր գնաճ ունեցող շատ զարգացող երկրների և որոշ զարգացած երկրների, որոնք ունեն դեֆլյացիայի մտավախություններ, Թուրքիայի տնտեսությունը տարիներ շարունակ տառապում է բարձր գնաճից՝ 2000-2003 թվականների միջին տարեկան գնաճը կազմել է 44.9 տոկոս: Թուրքիայի կառավարության՝ գնաճը նվազեցնելու փորձերը մինչև 2002 թվականը քիչ հաջողություն են ունեցել:

Թուրքիայի տնտեսությունը վերջին տասնամյակի ընթացքում փոքր պարբերաշրջանի մեջ է՝ իրար հաջորդող տնտեսական անկումներով և վերելքներով: Այդ պատճառով տնտեսագետների համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում ճգնաժամերի հնարավոր պատճառների բացահայտումը:

Այսպես, 90-ական թվականներին անարդյունավետ հարկաբյուջետային քաղաքականությունը, որն ուղեկցվեց պետական պարտքի շարունակական աճով, ինչպես նաև միջազգային կապիտալի շուկաներից օգտվելու անբարենպաստ պայմանները երկրի ներսում ձևավորեցին բարձր իրական տոկոսադրույքներ և պարտքի իրական բեռը դարձրին անհաղթահարելի: Նշված գործոնների, ինչպես նաև տարիներ շարունակ արմատավորված բարձր գնաճի պարագայում, որը խոչընդոտում էր տնտեսության բնականոն զարգացումը, 1994 թվականին անխուսափելի էր ճգնաժամի առաջացումը:

Սղաճի նվազեցման նպատակով 1999 թվականին կառավարությունը որդեգրեց սողացող ֆիքսումով փոխարժեքի ռեժիմ: Սակայն դա նույնպես չտվեց ցանկալի արդյունք, քանի որ կառավարությունը շարունակում էր նորանոր պարտքերի կուտակումը, միևնույն ժամանակ, որոշումների կայացման գործընթացում կառավարության գերիշխող դիրքը 1999 թվականի վերջին հանգեցրեց մի նոր ճգնաժամի:

2000 թվականի երկրորդ եռամսյակից սկսած՝ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի վատացումը, ֆինանսական հատվածի անկայունությունը, բանկային համակարգի պահուստների նվազումը և քաղաքական բախումները հաջորդ ճգնաժամի առաջացման հիմքեր ստեղծեցին: 2001 թվականին կառավարությունն այլևս ի վիճակի չէր պահպանել փոխարժեքի ծրագրված մակարդակը, որին հետևեց փոխարժեքի ճգնաժամ:

Նյութում ներկայացված են նշված ճգնաժամերի, տարիներ շարունակ արմատավորված բարձր գնաճի հնարավոր պատճառները, կառավարության իրականացրած քաղաքականությունները, տնտեսությունում առկա հիմնախնդիրները և ԱՄՀ-ի ու Համաշխարհային բանկի կողմից իրականացվող ծրագրերի ուղղվածությունները, տնտեսական տեղաշարժերի, իրականացվող կառուցվածքային բարեփոխումների ընթացքի վերլուծությունը: Նյութի վերջում ներկայացված է Թուրքիայի արտաքին առևտրի ապրանքային ու աշխարհագրական կառուցվածքը, ինչպես նաև Հայաստանի և Թուրքիայի միջև արտաքին առևտուրը:

# ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Ավելի քան երկու տասնամյակ բարձր և շարունակաբար կրկնվող գնաճը եղել և մնում է Թուրքիայի գլխավոր մակրոտնտեսական հիմնախնդիրը: Դեռևս 80-ական թվականների սկզբից Թուրքիայի կառավարության կողմից իրականացվող տնտեսական բարեփոխումներն՝ ուղղված արտաքին առևտրի և ֆինանսական հատվածի ազատականացմանը, ուղեկցվեցին հակաինֆլյացիոն անարդյունավետ քաղաքականությամբ: Վերջինս հիմնականում պայմանավորված էր անարդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության իրականացմամբ (խոշոր ռազմական ծախսեր, բյուջեի մեծ պակասուրդ և դրա հետ մեկտեղ՝ ԿԲ կողմից բյուջեի պակասուրդի ուղղակի ֆինանսավորում): Փորձելով պակասեցնել գնաճի տեմպերի կտրուկ նվազման հետևանքով առաջացած ծախսերը (ՀՆԱ աճի տեմպերի նվազում, պարտքի սպասարկման իրական ծախսերի աճ)՝ 1994 թվականից սկսած Թուրքիայի ԿԲ-ն հիմնականում իրականացրել է հարմարվողական[1] դրամավարկային քաղաքականություն, որը պայմանավորել է գնաճի իներցիան (ԿԲ կողմից գնաճի կտրուկ նվազեցումը, արմատավորված գնաճային սպասումների պայմաններում, կարող էր հանգեցնել իրական տոկոսադրույքների աճի, որի հետևանքով կմեծանար պարտքի իրական բեռը): Սա միևնույն ժամանակ նշանակում է գների շարունակական աճ, որի պայմաններում սպասումները դառնում են առաջնային: Եվ այս պարագայում պակասուրդի ֆինանսավորման համոզվածությունը դառնում է գնաճի իներցիայի թուլացման առանցքային պայմաններից մեկը, որից հետո արդեն ԿԲ-ն կարող է հարմարվողական դրամավարկային քաղաքականությունից անցնել կոշտ դրամավարկային քաղաքականության՝ նվազեցնելով գնաճը, համոզված լինելով, որ գանձապետարանը, գնաճի նվազման դեպքում, գոնե ժամանակավորապես, ի վիճակի է կրել բարձր իրական տոկոսադրույքների բեռը:

90-ական թվականներից սկսած՝ Թուրքիայի տնտեսությունում գրանցվել է իրական ՀՆԱ-ի միջին հաշվով 4-5 տոկոս աճ, սակայն վերջինս ուղեկցվել է նախորդ տարիներին տնտեսավարող սուբյեկտների գնաճային սպասումների արդյունքում ձևավորված պարբերական բարձր գնաճով: Տնտեսության անկայունության հիմքում եղել են կառուցվածքային խնդիրները, անկայուն պետական ֆինանսները և քաղաքական անվստահությունը: Կառավարության՝ նախորդ տարիների հակաինֆլյացիոն փորձերը քիչ հաջողություն են ունեցել, քանի որ բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը շարունակել է կատարել ԿԲ-ն, իսկ հասարակության շրջանում արդեն իսկ ձևավորված էին կոշտ գնաճային սպասումներ: Դրան նպաստել է նաև ներքին և արտաքին պարտքի շարունակական աճը, և արդյունքում վերջնահաշվով 1994 թվականին տնտեսությունը 4 տոկոս անկում ապրեց, որն ուղեկցվեց նաև փոխարժեքի ճգնաժամով, ինչի հետևանքով փոխարժեքն արժեզրկվեց մոտ 170 տոկոսով:

***Գրաֆիկ 1. ՀՆԱ իրական աճի և միջին սղաճի դինամիկան 1990 – 2003 թթ.***




[1] *Հարմարվողականություն ասելով նկատի է առնվում այն փաստը, որ տնտեսական քաղաքականության իրականացման գործընթացում հարկաբյուջետային մարմիններն ունեին գերիշխող դիրք, իսկ դրամավարկային մարմիններն իրենց քայլերը կառուցում էին կառավարության դիրքորոշումից ելնելով:*

Փոխարժեքի կտրուկ արժեզրկումը 1994 թվականին հանգեցրեց կարճաժամկետ հատվածում արտահանման ծավալների աճի և ներմուծման ծավալների կրճատման, որի արդյունքում ձևավորվեց ապրանքների և ծառայությունների հաշվեկշռի հավելուրդ` որոշակիորեն մեղմելով արտաքին հատվածից եկող ճնշումները:

*Գրաֆիկ 2. Արտաքին հատվածի զարգացումները 1990 – 2003 թթ.*




Սակայն կառավարության կողմից նոր պարտքերի կուտակումը, դրամավարկային քաղաքականության հարմարվողականությունը, իրական և ֆինանսական հատվածներում բարեփոխումների դանդաղ ընթացքը 1999 թվականի վերջին հանգեցրին մի նոր ճգնաժամի, որն այս անգամ ուղեկցվեց նաև տնտեսության ֆինանսական հատվածի ճգնաժամով: Նշված տարում տնտեսական անկումը կազմեց 5,6 տոկոս` միջին գնաճի 64.8 տոկոսի և փոխարժեքի արժեզրկման 60.6 տոկոսի պայմաններում: Մասնագետների կարծիքով ճգնաժամի նախահիմքերը կուտակվել էին 1994 թվականի ճգնաժամին հաջորդող 5 տարիների ընթացքում` կառավարության վարած սխալ կայունացման քաղաքականության հետևանքով: Ըստ էության, կայունացման քաղաքականությունը չէր լուծել տնտեսության համար վարակ հանդիսացող և տնտեսությունը քանդող երկու կարևորագույն խնդիր` շարունակաբար աճող ֆիսկալ անհաշվեկշռվածությունը և բանկային համակարգում շարունակաբար աճող համակարգային ռիսկը:

*Գրաֆիկ 3. Ներքին և արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշների դինամիկան 1990 - 2001 թթ.*




2000 թվականի սկզբից Թուրքիան ձեռնամուխ եղավ նոր կայունացման քաղաքականության իրականացմանը ԱՄՀ հետ` SBA (Stand-By Agreement) ծրագրի շրջանակներում, որն ընդունվել էր 1999 թվականի դեկտեմբերին: Սակայն մասնագետների

կարծիքով վերջինս, կառուցվածքային բարեփոխումների նոր փաթեթի հետ մեկտեղ, բավականին անիրատեսական էր և հիմնված էր փոխարժեքի միջոցով գնաճի նվազեցման գործընթացի վրա: Ծրագրով նախատեսվում էին հարկաբյուջետային կարգավորումներ և անցում սողացող ֆիքսումով ռեժիմի՝ պարտքի կայունության և գնաճի սպասումների մեղմացման նպատակով: Միևնույն ժամանակ, ծրագիրը ներառում էր կառուցվածքային բարեփոխումներ բանկային հատ-վածում, սոցիալական ապահովության, մասնավորեցման և գյուղատնտեսության ոլորտում: 2000 թվականի երկրորդ եռամսյակից կառավարությունն արագացրեց կառուցվածքային բարեփոխումների գործընթացը (պակասուրդը վերածվեց ավելցուկի և որոշ չափով զսպվեց գնաճը): Սակայն անկայուն ֆինանսական հատվածի դեռևս չլուծված խնդիրները էապես խոչընդոտեցին այս ծրագրի իրագործումը: Դրա հետ մեկտեղ, 2000 թվականի վերջերին վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի վատացումը և իրացվելիության պակասը հանգեցրին մի քանի բանկերի սնանկացման և բանկային համակարգի պահուստների կորստի: Այնուհետև հաջորդեցին քաղաքական բախումները, որոնք ծավալվեցին գործող կառավարության ան-վստահելի հակաճգնաժամային քաղաքականության իրականացման շուրջ: Արդյունքում՝ 2000 թվականի վերջերին արդեն կային փոխարժեքի նոր ճգնաժամ նախանշող պայմաններ: Կառավարությունն ի զորու չէր այլևս պահպանել փոխարժեքի ծրագրված մակարդակը և չնայած տնտեսությունում ձևավորված էին շատ բարձր տոկոսադրույքներ և բարձր գնաճ, ստիպված եղավ հայտարարել ազատ լողացող փոխարժեքի ռեժիմ: Նշվածն արդեն իսկ զգացնել տվեց 2001 թվականի առաջին եռամսյակում, երբ գրանցվեց փոխարժեքի բարձր արժեզրկում.

2001 թվականի մայիսից կառավարությունը ներդրեց կայունացման նոր ծրագիր (NEP – New Economic Policy), որի հիմնական դրույթներն էին.

1. Մակրոտնտեսական քաղաքականություն՝ ուղղված ֆինանսական կայունության ամրապնդմանը և պետական պարտքի կայունությանը: Կառավարությունը նախատեսում էր խստացնել հարկաբյուջետային քաղաքականությունը՝ ծրագրելով 2001 թվականի վերջին ապահովել ՀՆԱ-ում 5.5 տոկոս առաջնային հավելուրդ, որը 2002 թվականի դրությամբ պետք է վերաճեր 6.5 տոկոսի:
2. Բանկային համակարգի արագ վերակառուցում: Կառավարությունը նախատեսում էր արագացնել սնանկ բանկերի վերացումը համակարգից և պետական բանկերի սեփականաշնորհման միջոցով վերակառուցումը, որոնք զգալի միջոցներ էին կլանում պետական բյուջեից:
3. Պետական հատվածի բարեփոխումների ծրագրի իրագործում: Կառավարությունը նախատեսում էր իրականացնել այնպիսի ծրագիր, որի արդյունքում հարկաբյուջետային հատվածում խորը կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումներ պետք է կատարվեին՝ նպատակ հետապնդելով բարձրացնել պետական կառավարման և պետական ծախսային քաղաքականության արդյունավետությունը:
4. Նոր սեփականաշնորհման գործընթացի իրականացում, որը պետք է զուգորդվեր ազատականացման գործընթացով (մասնավորապես՝ էներգետիկայի, հեռահաղորդակցության և գյուղատնտեսության ոլորտներում), ինչպես նաև անկախ վերահսկողական մարմինների դերի ուժեղացմամբ: Կառավարությունը նախատեսում էր հիշյալ գործընթացի միջոցով բարելավել ներդրումային միջավայրը:
5. Սոցիալական համակարգի հզորացում: Կառավարությունը նախատեսում էր իրականացնել սոցիալապես անապահով խավերի (որոնք և ամենաշատն էին տուժել ճգնաժամերից) պաշտպանվածության նոր ծրագիր՝ նպատակ հետապնդելով նաև բարձրացնել ճգնաժամի տարիներին կառավարության հանդեպ հասարակության կորցրած վստահությունը:

Թվում էր, թե ծրագիրը տալիս է իր առաջին դրական պտուղները. Թուրքիայի ֆինանսական շուկաները կարճ ժամանակահատվածում որոշակի կայունության նախանշաններ ցույց տվեցին, որը հիմնականում պայմանավորված էր մեծածավալ ներդրումներով: Այդ ժամանակահատվածում ներդրողները գրեթե վստահ էին, որ Թուրքիայի տնտեսությունը կշահի արտաքին պաշտոնական դոնորներից (հիմնականում ԱՄՆ-ից) ստացված լրացուցիչ ֆինանսական օգնությունից, որն ուղղված էր ճգնաժամերի բացասական հետևանքները վերացնելուն: Այնուամենայնիվ, 2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչական գործողությունները զգալի բացասական ազդեցություն ունեցան Թուրքիայի տնտեսության վրա, և նույն տարում տնտեսությունում գրանցվեց ամենախորը տնտեսական ճգնաժամը: Բարձր իրական

տոկոսադրույքները[2], փոխարժեքի արժեզրկումները և պետական բանկերի վերակառուցման բարձր ֆիսկալ ծախսերը հանգեցրին պետական պարտքի կտրուկ աճի, որը 2000 թվականին ՀՆԱ-ում 58 տոկոս էր, իսկ 2001 թվականի վերջի դրությամբ վերաճեց 95 տոկոսի: Դրա հետ մեկտեղ, ուժեղ երաշտի հետևանքով զգալի՝ մոտ 6 տոկոսով, նվազում գրանցվեց նաև գյուղատնտեսական ապրանքների թողարկման ծավալներում: Արդյունքում՝ տնտեսական անկումը նշված ժամանակահատվածում կազմեց 9.5 տոկոս, իսկ գործազրկությունը 2000 թվականի 6.6 տոկոսից հասավ 8.5 տոկոսի:

2002 թվականից տնտեսությունը սկսեց վերականգնվել նախորդ տարվա ճգնաժամից՝ չնայած ֆինանսական շուկաները դեռևս անկայուն էին: ՀՆԱ իրական աճը նշված տարում կազմեց 7.8 տոկոս, ինչը 2.6 անգամ գերազանցեց կառավարության և ԱՄՀ համատեղ ծրագրով սահմանված 3 տոկոսը: Աճի վրա զգալի դրական ազդեցություն ունեցավ ընթացիկ տարում արտահանման և զբոսաշրջության ծավալների զգալի ավելացումը, որոնք էլ, իրենց հերթին, մասամբ կրել էին ճգնաժամով պայմանավորված՝ իրական փոխարժեքի արժեզրկման ազդեցությունը: Քիչ չէր նաև բնակլիմայական բարենպաստ պայմանների արդյունքում գրանցված՝ գյուղատնտեսության արտադրանքի թողարկման ծավալների 7 տոկոս աճի ազդեցությունը տնտեսական աճի ցուցանիշի վրա: Չնայած 2002 թվականի ընտրությունների հետ կապված իրականացվեց կառավարության բարձր ծախսային քաղաքականություն և հարկաբյուջետային քաղաքականության միջոցով խթանվեց ամբողջական պահանջարկը (բյուջեի առաջնային հավելուրդի ցուցանիշը՝ 4.0 տոկոս, ցածր էր ծրագրային 6.5 տոկոս մակարդակից)՝ միջին տարեկան գնաճը չգերազանցեց 30 տոկոս ցուցանիշը, որը վերջին 20 տարիների ընթացքում ամենացածրն էր: Արտաքին հատվածում արտահանման ծավալների աճի հետ մեկտեղ դրական տեղաշարժեր նկատվեցին նաև կապիտալի հաշվում, երբ ճգնաժամի հետ կապված կարճաժամկետ կապիտալի «փախուստը» դադարեցվեց: Վերջիններիս արդյունքում երկրի արտաքին պահուստներն աճեցին և տարվա վերջին կազմեցին 28 մլրդ ԱՄՆ դոլար: Ֆինանսական շուկաները ողջ տարվա ընթացքում բավականին տատանողական վարքագիծ դրսևորեցին, ինչը հիմնականում կապված էր ընտրությունների շրջանակներում քաղաքական վայրիվերումների հետ: Դրա հետ կապված, թեև կառավարության արժեթղթերի իրական տոկոսները զգալիորեն նվազել էին ճգնաժամից հետո, այնուամենայնիվ, դեռևս տատանվում էին 20 տոկոսի շրջանակներում:

*Գրաֆիկ 4. Փողի զանգվածի, տոկոսադրույքների և սղաճի դինամիկան 1990 – 2003 թթ.*




2003 թվականի սկզբից Իրաքյան պատերազմի հետ կապված խնդիրները և նոր կառավարության իրականացրած քաղաքականությունը ստեղծեցին նոր խնդիրներ: Սկզբնական

---

*[2] Թեև 2000 թվականից սկսած Թուրքիայի կառավարությանը հաջողվել էր զգալի նվազեցնել անվանական տոկոսադրույքները, սակայն դրանք, իրական արտահայտությամբ, դեռևս բարձր մակարդակ ունեն՝ կապված տնտեսության բարձր ռիսկայնության հետ:*

շրջանում կառավարության այնպիսի քայլերը, ինչպիսիք էին հարկային զիջումները (հարկումից ազատումները), հատուկ թոշակների բարձրացումները, ծխախոտի բարձր գների խրախուսումները և դրան զուգահեռ, բյուջեի միջանկյալ ցուցանիշների անհամապատասխանությունը ծրագրված մակարդակին, խորացող խնդիրները՝ կապված կարգավորող մարմինների անկախության հետ, հակասում էին նոր կայունացման ծրագրի հիմնադրույթներին: Բոլոր այս քայլերը խնդրահարույց ազդակներ էին հաղորդում շուկաներին, որոնք, ճգնաժամից հետո անհրաժեշտ բարեփոխումների տեմպերի դանդաղման պատճառով, առանց այդ էլ դարձել էին բավականին զգայուն: Դրան գումարած, Իրաքյան պատերազմը արտաքին ներդրողների շրջանում բացասական ակնկալիքներ էր առաջ բերել: Արդյունքում՝ որպես շուկայի իրավիճակը արտահայտող ցուցանիշ, կառավարության պարտատոմսերի տոկոսադրույքները 2003 թվականի մարտին հասան 75 տոկոսի, ինչը քաղաքականություն մշակողների համար հստակ ազդակ էր, որ կառավարությունը պետք է արագացնի տնտեսությունում կառուցվածքային բարեփոխումները՝ վերականգնի շուկայի վստահությունը և կայուն տնտեսական աճի համար անհրաժեշտ նախապայմաններ ապահովի:

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆԺԱՄԿԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2003 թվականի մայիսից սկսած՝ կառավարությունը տնտեսական բարեփոխումների իրականացման նոր քայլեր ձեռնարկեց: Հիմնականում ուշադրություն էր դարձվում հետևյալ խնդիրներին.

1. Հետևողական կոշտ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների իրականացում, ճկուն փոխարժեքի ռեժիմի պահպանում:
2. Կառուցվածքային բարեփոխումների իրականացում՝ թույլ ֆինանսական և պետական հատվածներն ամրապնդելու, այդ թվում նաև՝ ներդրումային միջավայրը բարելավելու և տնտեսական աճի համար ոչ գնաճային հիմքեր ստեղծելու համար:
3. Հետևողական սոցիալական քաղաքականության իրականացում՝ ուղղված հասարակության անապահով խավի սոցիալական խնդիրների լուծմանը (որոնք, ի դեպ, Թուրքիայի ընդհանուր բնակչությունում զգալի զանգված կազմելով, մեկը մյուսին հետևող ճգնաժամերի նկատմամբ ամենազգայունն էին և լուրջ խնդիրներ էին առաջացնում կառավարության համար):

Վերը նշված հիմնահարցերը և դրանցից բխող բոլոր խնդիրները, ինչպես նաև դրանց լուծմանն ուղղված կառավարության գործողությունները մանրակրկիտ ներկայացված էին կառավարության «***Շտապ գործողությունների պլան***» (UAP-Urgent Action Plan) ծրագրում, որը նախատեսվում էր իրագործել 2003 թվականի ընթացքում: Ծրագրի շրջանակներում առաջին դրական գործողություններն էին՝ օրենսդրական դաշտում որոշ փոփոխությունների կատարումը, մասնավորապես՝ ուղղակի հարկատեսակների գծով օրենսդրական նոր փաթեթի ներդրումը, «Արտաքին ուղղակի ներդրումների» մասին նոր օրենքի ստեղծումը, «Սնանկացման մասին» օրենքում էական փոփոխությունների իրականա-ցումը և այլն: Այս ոլորտում զգալի ձեռքբերում էր նաև «Պետական գնումների մասին» և «Պետական պարտքի կառավարման մասին» նոր օրենքների ներդրումը:

Կառավարության «Շտապ գործողությունների պլան» ծրագրով 2003 թվականի և դրան հաջորդող տարվա համար նախատեսվել էին բավականին անիրատեսական մակրոտնտեսական ցուցանիշներ: Այսպես՝ 2003 և 2004 թվականների համար ծրագրված էր 5 տոկոս տնտեսական աճի ցուցանիշ, իսկ ժամանակահատվածի վերջի դրությամբ նախատեսվում էր գնաճի ցուցանիշի նվազող վարքագիծ՝ համապատասխանաբար 20 տոկոս և 12 տոկոս: Նշենք, որ ծրագրի մակրոտնտեսական հատվածում մեծ ուշադրություն էր դարձվում կառավարության *պարտքի կայունության* խնդրի լուծմանը՝ տնտեսական աճի, ֆիսկալ կարգավորումների և ներդրումային միջավայրի բարելավման ճանապարհով: Ընդհանուր առմամբ, տնտեսական նախադրյալները ցույց էին տալիս, որ արտաքին և ներքին պարտքի կայունությունը որոշ չափով ձեռք է բերվել տնտեսական աճի, բյուջեի առաջնային ավելցուկի և փոխարժեքի կայունության շնորհիվ: Սակայն դեռևս խնդրահարույց էին մնում պարտքի կայունության ցուցանիշի հետագա զարգացումները, քանի որ կային վերլուծություններ, որոնք կասկածի տակ էին դնում պարտքի կայունության հետագա գնահատականները՝ կապված նախորդ տարիների խորը տնտեսական անկումների,

բարձր տոկոսադրույքների և այլ գործոնների հետ: Այդ իսկ պատճառով նախատեսվում էր 2003 և 2004 թվականներին ՀՆԱ-ում ապահովել համախմբված բյուջեի առաջնային հավելուրդի 6.5 տոկոս մակարդակ, իսկ պետական պարտքի՝ նվազող վարքագիծ՝ 2003 թվականի համար՝ ՀՆԱ-ում 70 տոկոս և 2004 թվականի համար՝ 66.2 տոկոս մակարդակներ: Ծրագրի մակրոտնտեսական հատվածի հաջորդ կարևոր մասը, որին նույնպես մեծ ուշադրություն էր դարձվում, 2003 թվականի սկզբներից նկատված՝ մասնավոր հատվածի կապիտալ ներհոսքի ծավալների հետագա աճի պահպանումն էր, որը, տնտեսական դրական արդյունքներից բացի, կամրապնդեր երկրի արտաքին պահուստները: Ծրագրված էր մասնավոր հատվածի կապիտալ ներհոսքի շարունակական աճ նաև 2004 թվականին, որի արդյունքում կուտակված արտարժութային միջոցների մի մասը նախատեսվում էր օգտագործել 2004 թվականին ԱՄՀ պարտքի մարման [3], իսկ մյուս մասը՝ երկրի արտաքին պահուստների ամրապնդման համար:

Որոշ մասնագետների (հիմնականում՝ ԱՄՀ և Համաշխարհային բանկի) գնահատմամբ, եթե 2003 և 2004 թվականներին Թուրքիային հաջողվեր ապահովել իր ծրագրային ցուցանիշները, ապա երկրի տնտեսությունը մուտք կգործի տնտեսական կայունացման փուլ: Միևնույն ժամանակ, նրանք այն կարծիքին էին, որ դեռևս կան որոշ գործոններ, որոնք կարող են ծրագրի հաջող իրագործման համար լուրջ վտանգ ներկայացնել: Այդպիսի ռիսկերն էին.

1. 2001 թվականին տեղի ունեցած 9.4 տոկոս ՀՆԱ անկումը, որը խորապես թուլացրեց տնտեսությունը,
2. բանկերի կողմից մասնավոր հատվածի վարկավորման շարունակական նվազումը,
3. ռազմական գործողությունները հարևան Իրաքում, որը Թուրքիային մշտապես պահել է լարվածության մեջ,
4. Թուրքիայում քաղաքական անկայունությունը՝ կապված ընտրությունների արդյունքների անորոշության, նոր կառավարության ձևավորման ձգձգումների հետ:

Այնուամենայնիվ, 2003 թվականի երկրորդ եռամսյակից սկսած՝ տնտեսական զարգացումները որոշակի հուսադրումներ առաջ բերեցին: Այսպես՝ արտահանման ծավալների կայուն աճը և տնտեսական կարողությունների արդյունավետ օգտագործումը հիմքեր տվեցին ակնկալելու, որ ծրագրված 5 տոկոս տնտեսական աճի ցուցանիշը հասանելի է: Հունիս-հուլիս ամիսներին մեծածախ առևտրի և սպառողական գների ինդեքսները՝ դրսևորելով սեզոնային վարքագիծ, վերջին 20 տարիների ընթացքում առաջին անգամ բացասական էին, ինչը վկայում էր, որ տարվա համար նախատեսված ժամանակահատվածի վերջի դրությամբ գնաճի փաստացի ցուցանիշը գտնվելու էր ծրագրված 20 տոկոսի շրջանակներում: Ներքին տոկոսադրույքները և պետական արժեթղթերի երկրորդային շուկայի տոկոսադրույքները նվազեցին՝ հուլիս ամսվա 50 տոկոս մակարդակից սեպտեմբերին հասնելով 35 տոկոսի, որի արդյունքում նվազեցին նաև իրական տոկոսադրույքները: Այս պայմաններում ակնկալվում էր, որ անվանական տոկոսադրույք-ների նվազման միտումները կպահպանվեին հետագայում: 2003 թվականի սեպտեմբերի դրությամբ որոշակիորեն վատացավ ընթացիկ հաշվի հաշվեկշիռը, ինչն ուղեկցվեց իրական փոխարժեքի 20 տոկոս արժեքավորմամբ: Նման զարգացումների արդյունքում ակնկալվում էր, որ 2003 թվականի վերջին պակասուրդը կկազմեր 7.5 մլրդ ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ 3.2 տոկոսը (նախորդ տարվա 0.8 տոկոսի փոխարեն):

Ինչպես նշվեց, երկրորդ եռամսյակից սկսած՝ տնտեսական բարենպաստ զարգացումներն արդեն իսկ իրենց ազդեցությունն ունեցան 2003 թվականի տնտեսական աճի վրա, որը կազմեց 6 տոկոս՝ գերազանցելով 5 տոկոս ծրագրային ցուցանիշը: 2002 և 2003 թվականներին գրանցված տնտեսական աճն արդեն հաստատում է այն փաստը, որ խելամիտ քաղաքականությունների արդյունքում երկրի տնտեսությունը կարող է հասնել իր պոտենցիալին:

Հաջորդ դրական փաստը, որ գրանցվել է Թուրքիայի տնտեսությունում, գնաճի 20 տոկոս ծրագրային ցուցանիշից ցածր գնաճի հաստատումն էր, որը շարունակում է նվազման միտումը 2004 թվականի առաջին եռամսյակում: 25 տարվա ընթացքում առաջին անգամ մեծածախ գների աճը կազմեց միանիշ թիվ:

Ընթացիկ հաշվի պակասուրդը կազմեց ՀԱԱ 3 տոկոսը, որը ծրագրվածի շրջանակներում է: Դրան մեծապես նպաստեց արտահանման և զբոսաշրջության կայուն աճը: Թուրքիայի արտաքին

---

[3] *Ըստ ԱՄՀ հետ համատեղ Stand-By համաձայնագրի, սկսած 1999 թվականից Թուրքիան վճարային հաշվեկշռի կառուցվածքային խնդիրների լուծման համար ստացել էր կարճաժամկետ վարկեր, որոնց մարումները սկսվում էին 2004 թվականից:*

մրցունակությանը նպաստեցին այնպիսի գործոններ, ինչպիսիք են արտադրողականության աճը և միավոր աշխատուժի վրա կատարվող ծախսերի կրճատումը:

Զգալի ծեռքբերումներ նկատվեցին նաև հարկաբյուջետային քաղաքականության բնագավառում. 2003 թվականին առաջնային ավելցուկը կազմեց ՀԱԱ 6.2 տոկոսը, չնայած այս ցուցանիշը 0.3 տոկոսային կետով ցածր է ծրագրային ցուցանիշից:

Թուրքիայի Կենտրոնական բանկը շարունակում է իր ընտրած ռազմավարությունը, այն է՝ որպես անվանական խարիսխ համարվում է փողի բազան, միևնույն ժամանակ մոնիտորինգի են ենթարկվում դրամական ագրեգատների զարգացումները՝ գնաճի ապագա մակարդակը գնահատելու համար: Մեծ ուշադրություն է դարձվում կարճաժամկետ տոկոսադրույքների կիրառությանը, որի խելամիտ սահմանումը բարձրացնում է ԿԲ նկատմամբ վստահությունը և անկախությունը:

Կառավարության ձեռնարկած հաջորդ կարևոր քայլը անարդյունավետ պետական բանկերի լուծարումն ու միավորումն էր, ինչպես նաև պետական բանկերի վերակառուցումն ու նախապատրաստումը սեփականաշնորհման:

Թուրքիայի պետական պարտքի կայունության վերջին վերլուծությունները վկայում են, որ միջինժամկետ հատվածում պարտքի կայունությունը հասանելի է: Այնպիսի հիմնական գործոնների բարելավումը, ինչպիսիք են՝ հարկաբյուջետային մասով ծեռքբերումները, տնտեսական աճը, փոխարժեքի կայունությունը և իրական տոկոսադրույքները, արդեն վկայում են երկրի վճարունակության բարելավման մասին: Այնուամենայնիվ, պետական պարտքը մնում է Թուրքիայի առաջնային տնտեսական հիմնախնդիրը՝ հաշվի առնելով արտարժույթով արտահայտված պարտքի կշիռը և ներքին պարտքի սպասարկման տարեկան մեծ վճարները (2004 թվականի համար այն կազմում է ՀԱԱ-ի մոտ 50 տոկոսը):

### Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները 1999-2004 թվականներին

*Աղյուսակ 1*

| | 1999 փաստ. | 2000 փաստ. | 2001 փաստ. | 2002 փաստ. | 2003 փաստ. | 2003 ծրագր. | 2004 ծրագր. |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀԱԱ (մլրդ ԱՄՆ դոլար) | 187.4 | 201.3 | 146.5 | 156.8 | | 177.3 | |
| ՀԱԱ իրական աճ (%) | -6.1 | 6.3 | -9.5 | 7.8 | 6 | 5 | 5 |
| Սղաճ (ժամ. վերջ) | 68.8 | 39 | 68.5 | 29.7 | 18 | 20 | 12 |
| Սղաճ (միջին տարեկան) | 64.8 | 54.9 | 54.4 | 44.9 | 25.3 | | |
| ՊԿՊ տոկոսադրույք | 106.2 | 25 | 85.3 | 59.5 | 34.9 | 46.4 | 31.3 |
| Միջին իրական տոկոսադրույք | 32 | -9.5 | 35.5 | 29.5 | | 29.0 | 18.9 |
| *Տոկոսը ՀԱԱ-ում* | | | | | | | |
| **Պետական բյուջե** | | | | | | | |
| Առաջնային հաշվեկշիռ | 2.5 | 4.3 | 4.8 | 2.4 | 6.2 | 6.5 | 5.5 |
| Զուտ տոկոսավճարներ | 13.1 | 15.8 | 24.7 | 17.7 | | 16.0 | 13.6 |
| Ընդհանուր հաշվեկշիռ | -10.6 | -11.5 | -19.9 | -15.3 | | -11.0 | -7.8 |
| **Պետական պարտք** | 61 | 57.7 | 94.0 | 80.0 | | 69.6 | 66.2 |
| Արտաքին պարտք | 20.1 | 18.5 | 37.7 | 32.1 | | 27.3 | 25.1 |
| Ներքին պարտք | 40.9 | 39.2 | 56.3 | 47.8 | | 42.3 | 41.1 |
| **Ընթացիկ հաշիվ** | -0.7 | -4.9 | 2.4 | -0.8 | -3.0 | -3.2 | -2.0 |
| Փողի զանգվածի աճ (տոկոսներով) | 100.3 | 40.5 | 86.2 | 29.1 | 14.2 | 25.9 | 17.1 |

*Աղյուսակ 2*

| | 1994 | 1995 | 1996 | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար) | 2188 | 2794 | 2949 | 3040 | 3160 | 2873 | 2957 | 2122 | 2604 | |
| Գների մակարդակ (ԱՄՆ նկատմամբ) | 40.9 | 48.7 | 48.2 | 46.0 | 49.3 | 47.1 | 48.3 | 38.0 | | |
| Գործազրկության մակարդակ | 7.6 | 6.6 | 5.8 | 6.9 | 6.2 | 7.3 | 6.6 | 8.4 | 10.3 | 10.5 |
| Արտահանում/ՀՆԱ | 21.4 | 19.9 | 21.5 | 24.6 | 24.3 | 23.2 | 24.0 | 33.7 | 28.8 | 27.4 |
| Ներմուծում/ՀՆԱ | 20.4 | 24.4 | 27.8 | 30.4 | 27.9 | 26.9 | 31.5 | 31.3 | 30.5 | 30.7 |
| Փոխարժեքի փոփոխություն (տոկոսային) | 169.5 | 54.8 | 77.6 | 86.6 | 71.7 | 60.6 | 49.3 | 96.0 | 23.0 | -0.4 |

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***ԱՄՀ.*** Դեռևս կառավարության տնտեսական բարեփոխումների ծրագրերի իրագործման սկզբից մեծ էր Թուրքիային միջազգային կազմակերպությունների աջակցությունը, որը շարունակվում է նաև այսօր: 2002-2004 թվականներին Թուրքիայի տնտեսական զարգացման համար նախատեսված կառավարության ծրագրին ԱՄՀ-ն աջակցում է "Stand-by Arrangement" ծրագրի շրջանակներում, որը հաստատվել է 2002 թվականի փետրվարի 4-ին: Ֆինանսավորման առավելագույն գումարը կազմում է 12.8 մլրդ SDR (ՀՓԻ)՝ 2002-2004 թվականների համար, որի արդյունքում ԱՄՀ նկատմամբ Թուրքիայի պարտավորությունները կդառնան 30 մլրդ SDR: Հերթական բաշխումը՝ 867.6 մլն SDR-ին համարժեք գումարը 2002 թվականի համապատասխան բաժինն էր:

***Համաշխարհային բանկ.*** Համաշխարհային բանկի աջակցությունը նույնպես զգալի է: 2001-2002թթ. Համաշխարհային բանկը Թուրքիային տրամադրել է 4.5 մլրդ ԱՄՆ դոլար: Համաշխարհային բանկի ընդհանուր վարկավորման քաղաքականությունը իրականացվում է "Country Assistance Strategy" ծրագրով[4], որի շրջանակներում տրամադրված և տրամադրվելիք վարկավորման ընդհանուր գումարը 2000-2003 թվականների համար կազմում է 6.2 մլրդ ԱՄՆ դոլար: Ծրագիրը Թուրքիայում միջինժամկետ տնտեսական աճին ուղղված միջոցառումների ապահովման, բարձր գնաճի նվազեցման, երկրի վճարունակության ամրապնդման նպատակ ունի: Ըստ ծրագրի՝ նախատեսվում է կառուցվածքային բարեփոխումների լայն շրջանակ, մասնավորապես՝ հարկաբյուջետային կարգավորումներ, որոնք կվերականգնեն բյուջետային հատվածի վճարունակությունը:

**ԱՄՆ.** Թուրքիայի կառավարության տնտեսական բարեփոխումների ծրագրին բավականին մեծ աջակցություն էր նաև 2003 թվականի սեպտեմբերի կեսերին ստորագրված ԱՄՆ տնտեսական աջակցության համաձայնագիրը, ըստ որի՝ ԱՄՆ-ն արտոնյալ տոկոսներով պետք է 8.5 մլրդ ԱՄՆ դոլարի չափով վարկեր տրամադրի Թուրքիային: Վարկավորման նպատակը պետական պարտքի կայունության և երկրի արտաքին պահուստների ամրապնդման շրջանակներում ռիսկերի նվազեցումն է:

## ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

1998-2001 թվականներին[5] Թուրքիայի արտաքին առևտուրը ընդհանուր առմամբ դրսևորել է որոշակի տատանողական վարքագիծ՝ հիմնականում պայմանավորված 1999 և 2001 թվականներին Թուրքիայի տնտեսության ճգնաժամերով: Այսպես, 1998 թվականին գրանցված արտաքին առևտրի շրջանառության 72.9 մլրդ ԱՄՆ դոլարի ծավալը 1999 թվականի ճգնաժամի հետևանքով նվազեց և կազմեց 67.3 մլրդ ԱՄՆ դոլար, որից հետո, 2000 թվականին նկատված կարճատև տնտեսական աշխուժացման արդյունքում, արտաքին առևտրի շրջանառության ծավալները վերաճեցին 80 մլրդ ԱՄՆ դոլարի: Իսկ 2001 թվականի տնտեսական խորը անկման պայմաններում վերջինս նորից նվազեց և կազմեց 72.7 մլրդ ԱՄՆ դոլար:

***Արտահանում.*** 1998-2001 թվականների ընթացքում ապրանքների արտահանման միջին աճի տեմպը կազմել է 6 տոկոս, և 2001 թվականին արտահանումը կազմել է 31 մլրդ ԱՄՆ դոլար՝ 1998 թվականի 27 մլրդ ԱՄՆ դոլարի փոխարեն: Ապրանքների արտահանման կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռը ունեն տեքստիլ ապրանքները, որոնք 2001 թվականի տվյալներով կազմել են ապրանքների արտահանման 33 տոկոսը: Արտահանման հաջորդ մեծ խումբը կազմում է ավտոմեքենաների արտահանումը, որը վերը նշված տարիների ընթացքում ունեցել է աճի

---

*[4] Համաշխարհային բանկը իրականացնում է հետևյալ վարկային ծրագրերը. Համաշխարհային բանկի կողմից տրվող «Մասնավոր և ֆինանսական հատվածների կարգավորման վարկը» (PEPSAL) ուղղված է բանկային և մասնավոր հատվածներում բարեփոխումների իրականացմանը, որն աջակցելու է հարկաբյուջետային և մասնավոր հատվածի բարելավմանը: Բացի այդ, այն աջակցելու է մասնավոր հատվածի զարգացմանը և սոցիալական ապահովության ամրապնդմանը: Տնտեսական բարեփոխումների վարկը (ERL) ներառում է էներգետիկայի, գյուղատնտեսության և հեռահաղորդակցության ոլորտներում բարեփոխումներ, ինչպես նաև պետական ձեռնարկությունների մասնավորեցման և հարկաբյուջետային բարեփոխումներ: Գյուղատնտեսության հատվածում բարեփոխումները ներառում են գյուղացիական տնտեսություններին ուղղակի աջակցում: "The Social Risk Mitigation and Privatization Social Support" ծրագիրն ուղղված է սոցիալական ապահովության համակարգի բարելավմանը և ճգնաժամի սոցիալական հետևանքների թեթևացմանը:*

*[5] 2002-2003 թվականներին ըստ երկրների և ապրանքախմբերի Թուրքիայի արտաքին առևտրի կառուցվածքի մասին բավարար տեղեկատվություն չունենալու պատճառով դիտարկվել են 1998-2001 թվականների զարգացումները:*

միտում և 2001 թվականին կազմել է ապրանքների արտահանման 10 տոկոսը: Ապրանքների արտահանման կառուցվածքում մեծ է նաև երկաթի և պողպատի արտահանումը՝ մոտ 10 տոկոս: Հաջորդ մեծ խումբը կազմում են վերամշակված գյուղատնտեսական ապրանքները, որոնք 2001 թվականի տվյալներով կազմել են ընդհանուր ապրանքային արտահանման 5 տոկոսը:

Արտահանման աշխարհագրական կառուցվածքում որպես հիմնական խոշոր առևտրային գործընկեր երկրներ առանձնանում են ԱՄՆ-ն և Եվրոմիության երկրները, մասնավորապես՝ Գերմանիան, Իտալիան, Անգլիան, Ֆրանսիան: 2001 թվականի տվյալներով՝ Գերմանիայի տեսակարար կշիռը արտահանման կառուցվածքում կազմել է 17 տոկոս, ԱՄՆ-ինը՝ 10 տոկոս, Իտալիայինը՝ 8 տոկոս:

***Ներմուծում.*** Ինչպես նշվեց, 1998-2001 թվականների ընթացքում ապրանքների ներմուծումը կրճատվել է՝ բացառությամբ 2000 թվականի: 2001 թվականին կազմել է 40 մլրդ ԱՄՆ դոլար՝ 1998 թվականի 46 մլրդ ԱՄՆ դոլարի փոխարեն: 2001 թվականի տնտեսական խոշոր անկման (9.5 տոկոս), ինչպես նաև բարձր գնաճի (ժամանակաշրջանի վերջի դրությամբ 68.5 տոկոս) հետևանքով տեղի ունեցած իրական եկամուտների կտրուկ անկումն իր էական ազդեցությունն է ունեցել ներմուծվող բոլոր ապրանքախմբերի կտրուկ նվազման վրա: Ներմուծման մեջ մեծ տեսակարար կշիռ կազմող ապրանքային խմբերի մեջ կարելի է առանձնացնել մետաղական ապրանքները և մեքենաները, որոնք 2001 թվականի տվյալներով կազմել են ապրանքային ընդհանուր ներմուծման 16 տոկոսը: Հաջորդ մեծ խումբը քիմիական արտադրության ապրանքներն են, որոնք 2001 թվականին կազմել են ապրանքային ընդհանուր ներմուծման 12 տոկոսը: Ներմուծման մեջ մեծ տեսակարար կշիռ կազմող հաջորդ խումբ ապրանքների շարքում առանձնացվում են, համապատասխանաբար, անմշակ նավթը՝ ապրանքային ներմուծման 11 տոկոսը, բենզինը՝ ապրանքային ներմուծման 10 տոկոսը և էլեկտրական սարքավորումները՝ ապրանքային ներմուծման 9 տոկոսը:

Ներմուծման աշխարհագրական կառուցվածքում նույնպես որպես հիմնական խոշոր գործընկեր երկրներ առանձնանում են ԱՄՆ-ն և Եվրոմիության երկրները, համապատասխանաբար՝ Գերմանիան, Իտալիան, Ֆրանսիան և Անգլիան: Մասնավորապես, 2001 թվականի տվյալներով Գերմանիայի տեսակարար կշիռը ընդհանուր ներմուծման մեջ կազմել է 13 տոկոս, Իտալիայինը՝ 9 տոկոս, ԱՄՆ-ինը՝ 8 տոկոս, Ֆրանսիայինը՝ 6 տոկոս:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏ

Հայաստանի՝ Թուրքիայի հետ արտաքին առևտրի հաշվեկշիռը մշտապես եղել է դեֆիցիտային: Դա պայմանավորված է Թուրքիայի կողմից ապրանքների արտահանման նկատմամբ արգելքներով (2003 թվականին ներմուծումը մոտ 38 անգամ գերազանցել է արտահանումը):

*Աղյուսակ 3*

| մլն ԱՄՆդոլար | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 |
|---|---|---|---|---|---|---|
| Արտահանում | 2.9 | 1.1 | 1.5 | 1.1 | 1.4 | 1.0 |
| Ներմուծում | 56.8 | 40.1 | 40.5 | 33.8 | 38.2 | 38.1 |
| Արտաքին առևտրի շրջանառություն | 59.7 | 41.2 | 42.0 | 34.9 | 39.6 | 39.1 |

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, վերը նշված տարիների ընթացքում արտաքին առևտրի շրջանառությունը Թուրքիայի հետ նվազել է: 2003 թվականին, 1998 թվականի համեմատ, այն բավականին կրճատվել է (34.5 տոկոսով):

Ստորև ներկայացված են Թուրքիա արտահանվող վեց ապրանքախմբերը և Թուրքիայից ներմուծվող այն ապրանքախմբերը, որոնք մեծ կշիռ են կազմում ընդհանուր ներմուծման մեջ:

Ապրանքների արտահանում

*Աղյուսակ 4*

| *մլն ԱՄՆդոլար* | 2002 |
|---|---|
| 1. Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ | 0.9 |
| 2. Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից իրեր | 0.4 |
| 3. Սարքեր և ապարատներ | 0.06 |
| 4. Մանածագործական իրեր | 0.03 |
| 5. Փայտ և փայտյա իրեր | 0.02 |
| 6. Ալյումին և ալյումինե իրեր | 0.02 |
| Ընդամենը | 1.4 |

Թուրքիա արտահանվող ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքներն են՝ մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ, խոշոր եղջերավոր անասունների մորթի, ոչխարի մորթի:

Ապրանքների ներմուծում

*Աղյուսակ 5*

| *մլն ԱՄՆ դոլար* | 2002 |
|---|---|
| 1. Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր | 6.31 |
| 2. Պատրաստի սննդի արտադրանք | 5.82 |
| 3. Մանածագործական իրեր | 4.82 |
| 4. Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ | 3.7 |
| 5. Քիմիա և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք | 2.98 |
| 6. Թուղթ և թղթից իրեր | 2.94 |
| 7. Իրեր քարից, գիպսից, ցեմենտից | 2.54 |
| 8. Պլաստմասսա և դրանցից իրեր | 1.92 |
| 9. Տրանսպորտի միջոցներ և մասեր | 1.67 |
| 10. Տարբեր արդյունաբերական ապրանքներ | 1.12 |
| 11. Բուսական ծագման արտադրանք | 0.86 |
| 12. Փայտ և փայտյա իրեր | 0.75 |
| 13. Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից իրեր | 0.7 |
| 14. Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք | 0.67 |
| 15. Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր | 0.6 |
| 16. Այլ | 0.83 |
| 17. Ընդամենը | 38.23 |

Ի տարբերություն արտահանման փոքր ծավալների, ապրանքների ներմուծման ծավալները բավական մեծ են: Թուրքիայից ներմուծվում են բազմատեսակ ու բազմաբնույթ ապրանքներ, ընդ որում՝ ապրանքների դիվերսիֆիկացիան (բազմազանեցումը) բավական մեծ է: Թուրքիայից ներմուծվող հիմնական խոշոր ապրանքախմբերն են՝ «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «Պատրաստի սննդի արտադրանք», «Մանածագործական իրեր», «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ»:

*Գրաֆիկ 5. ՀՀ դրամ/լիրա իրական փոխարժեքը (1995=100, աճը նշանակում է ՀՀ դրամի արժեքավորում)*




1997-2000 թվականներին արձանագրվել է թուրքական լիրայի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկում: Արժեզրկման միջին տեմպը նշված տարիներին կազմել է 4.4 տոկոս: 2001 թվականին, նախորդ տարվա համեմատ, իրական փոխարժեքն արժեքավորվել է շուրջ 25.4 տոկոսով, որը հիմնականում պայմանավորված է եղել Թուրքիայում տեղի ունեցած փոխարժեքի ճգնաժամով: Դրա հիմնական գործոններից՝ գնաճը և փոխարժեքը, ՀՀ-ում և Թուրքիայում դրսևորել են հետևյալ վարքագծերը. Հայաստանում 2001 թվականին տարեկան միջին գնաճը կազմել է 3.1 տոկոս և ՀՀ դրամի անվանական փոխարժեքի արժեզրկման տեմպը ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ 2.9 տոկոս, իսկ Թուրքիայում 2001 թվականին տարեկան միջին գնաճը կազմել է 54.4 տոկոս և թուրքական լիրայի անվանական փոխարժեքի արժեզրկման տեմպը ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ 96 տոկոս: Թուրքական լիրայի փոխարժեքի արժեզրկման նման բարձր տեմպը պայմանավորված էր 2001 թվականին Թուրքիայի կողմից ազատ լողացող փոխարժեքի քաղաքականությանն անցնելու փաստի հետ: Արդյունքում՝ 2001 թվականին ՀՀ դրամի իրական փոխարժեքը թուրքական լիրայի նկատմամբ կտրուկ արժեքավորվել է: 2002 թվականից սկսած՝ ՀՀ դրամ/լիրա իրական փոխարժեքը նորից դրսևորել է արժեզրկման միտումներ՝ 2002 և 2003 թվականներին արժեզրկվել է համապատասխանաբար 15.9 և 17.3 տոկոսով, ինչը վկայում է, որ թուրքական շուկայում հայկական ապրանքների մրցունակությունը բարձրացել է: Սակայն նշենք մի կարևոր փաստ. վերը նշված տարիներին իրական փոխարժեքի փոփոխություններն էական ազդեցություն չեն ունեցել Թուրքիայի հետ արտաքին առևտրի ծավալների վրա, որը թերևս վկայում է Հայաստանի նկատմամբ Թուրքիայի կողմից վարվող սահմանափակող քաղաքականության մասին[6]:

Ստորև ներկայացված է ՀՀ դրամ/լիրա իրական փոխարժեքի և Թուրքիայից ապրանքների ներմուծման վարքագիծը 1997-2003 թվականներին: Արտահանման շարժը չի ներառվել այն պատճառով, որ Թուրքիան պաշտոնապես փակել է առևտրային սահմանը Հայաստանի հետ, իսկ մեր ներմուծողները թուրքական ապրանքները հիմնականում ներմուծում են Վրաստանի տարածքով[7]: Այդ իսկ պատճառով Թուրքիայի մակրոտնտեսական զարգացումները չեն կարող էական ազդեցություն ունենալ ՀՀ արտահանման վրա: Այդ են վկայում վիճակագրական

---

*[6] Նշված տարիների ընթացքում, ինչպես և ներկայումս, Թուրքիայի կառավարությունը, կապված քաղաքական դաշտում Հայաստանի հետ որոշ հակամարտությունների հետ, Հայաստանին որպես առևտրային գործընկեր չի ճանաչել և պաշտոնապես փակել է առևտրային սահմանը: Ավելին՝ 2003թ. փետրվարի 5-ին Առևտրի համաշխարհային կազմակերպությանը անդամակցելուց հետո էլ Թուքիան հրաժարվել է Հայաստանը ճանաչել որպես նոր առևտրային գործընկեր, և ՀՀ և Թուրքիայի միջև առևտրային հարաբերությունները կարգավորվում են GATT (1994) XIII հոդվածի դրույթների համաձայն, որտեղ նշվում է, որ եթե անդամակից երկու երկիր քաղաքական ասպարեզում ունեն անհաշտություններ, ապա այդ երկրների վրա չեն տարածվում ՀԱԿ-ի կանոնները, և երկրները իրավասու են իրենք ընտրելու իրենց առևտրային քաղաքականությունների պայմանները:*

*[7] Նշենք նաև, որ որպես արտաքին առևտրում համընդհանուր կանոն, ներմուծվող ապրանքները տվյալ երկրի սահմանի վրա գրանցվում են ըստ ծագման վայրի: Այդ իսկ պատճառով Թուրքիայի պաշտոնական սահմանափակումը ավելի հեշտ է շրջանցել Հայաստանի ներմուծողների, քան թե արտահանողների համար:*

տվյալները (1999-2003 թվականներին արտահանումը տատանվել է 1.0 -1.5 մլն ԱՄՆ դոլարի սահմաններում):

*Գրաֆիկ 6. ՀՀ դրամ/լիրա իրական փոխարժեքի և իրական ներմուծման դինամիկան 1998 – 2003 թթ.*




*Գրաֆիկ 7. ՀՀ դրամ/լիրա և Հայաստանի գործընկեր երկրների (առանց Թուրքիայի) իրական արդյունավետ փոխարժեք (աճը նշանակում է ՀՀ դրամի արժեքավորում)*




Ինչ վերաբերում է Թուրքիայից ներմուծմանը, ապա ՀՀ դրամի իրական փոխարժեքի և ներմուծման իրական ծավալների միջև առկա է որոշակի առաձգականություն (տե՛ս գրաֆիկ 6): Այսպես, 2000-2003 թթ. ներմուծման միջին առաձգականությունը կարճաժամկետ հատվածում 0.55 է (մեկ տարվա կտրվածքով), ինչը նշանակում է, որ իրական փոխարժեքի մեկ տոկոսային կետով արժեզրկումը հանգեցնում է ավելի փոքր՝ 0.55 տոկոսային կետով իրական ներմուծման կրճատման: Դա է պատճառը, որ որոշ տարիների, օրինակ՝ 2001 թվականին, ՀՀ դրամի իրական փոխարժեքի արժեքավորման հետ մեկտեղ, Թուրքիայից դոլարային արտահայտությամբ ներմուծումը կրճատվել է: Նշենք նաև, որ, ընդհանուր առմամբ, ՀՀ դրամի իրական փոխարժեքը թուրքական լիրայի նկատմամբ, ինչպես նաև ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքը Հայաստանի մյուս գործընկեր երկրների (առանց Թուրքիայի) արժույթների նկատմամբ ունեցել են արժեզրկման նույն միտումը (տե՛ս գրաֆիկ 7):

Փաստորեն վերը նշվածից կարելի է նկատել, որ Թուրքիայից Հայաստան ներմուծվող ապրանքների շարժերի փոփոխության մեջ մեծ դեր են խաղացել նաև այլ ոչ գնային գործոններ, ինչպիսին է, օրինակ՝ սպառողների նախասիրությունների փոփոխությունը՝ պայմանավորված

բնակչության եկամուտների աճով: Դա են վկայում նաև Հայաստանի ընդհանուր ներմուծման և Թուրքիայից ներմուծման ցուցանիշները, որոնք ներկայացված են գրաֆիկ 8-ում:

*Գրաֆիկ 8*




Ինչպես տեսնում ենք գրաֆիկ 8-ից, ընդհանուր ներմուծման (ընդհանուր ներմուծումից բացառվել են այն ապրանքախմբերը, որոնք փոքր կշիռ ունեն Թուրքիայից ներմուծման մեջ) և Թուրքիայից ներմուծման ծավալների միտումները տարիների ընթացքում դրսևորել են համապատասխանաբար աճի և նվազման վարքագծեր, ինչը հանգեցրել է ներմուծման մեջ Թուրքիայի կշռի նվազման: Վերջինիս վրա էական ազդեցություն են ունեցել ինչպես երկրից երկիր Հայաստանի ներմուծողների տեղափոխության մեծ ճկունությունը, այնպես էլ եկամուտների աճով պայմանավորված՝ որակական նախասիրությունների փոփոխությունները: Վերջինիս հետ կապված կարելի է փաստել, որ 2001-2003թթ. ընթացքում Հայաստանում բնակչության տնօրինվող եկամտի իրական աճի միջին ցուցանիշը կազմել է 12.5%, մինչդեռ նույն ժամանակահատվածի համար իրական ներմուծման աճը կազմել է 4.4%, իսկ դոլարայինն աճը՝ 6.4%:

Վերը նշված հարցադրումները ավելի խորը պարզաբանելու և հիմնավորելու նպատակով վերլուծության են ենթարկվել Թուրքիայից ներմուծման մեջ մեծ կշիռ ունեցող ապրանքախմբերի կառուցվածքային տեղաշարժերը:

Նախ վերլուծենք «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի, որն ունի ամենամեծ կշիռը Թուրքիայից ներմուծման մեջ, ներմուծման վարքագիծն ըստ երկրների: Այս ապրանքախմբի մեջ մտնող ապրանքները հիմնականում ներմուծվում են (ներմուծման մեջ մեծ կշիռ ունեն) համապատասխանաբար Ռուսաստանից, Ուկրաինայից, Թուրքիայից, Միացյալ Արաբական էմիրաթներից և Գերմանիայից:

Ինչպես երևում է գրաֆիկից, թեև աճում են Թուրքիայից ներմուծվող ապրանքների ծավալները, ինչը Հայաստանում եկամուտների աճի արդյունք է, սակայն ավելի արագ տեմպերով աճում է Ռուսաստանից ներմուծումը: Արդյունքում՝ այս ապրանքախմբում տեղի է ունեցել նշանակալի կառուցվածքային տեղաշարժ՝ Թուրքիայից և Ուկրաինայից դեպի Ռուսաստան: Ընդ որում, ռուսական և թուրքական ապրանքները որակով շատ մոտ են և փոխարինման բարձր առաձգականություն ունեն, թեև ռուսականը համարվում է փոքր-ինչ ավելի որակով, ինչն էլ ապահովել է շարժը Թուրքիայից Ռուսաստան: Սակայն դա կայուն երևույթ չի կարելի համարել, և պարամետրերի որոշակի շարժի դեպքում (օրինակ՝ Թուրքիայի հետ սահմանների բացումը) փոխարինման բարձր առաձգականությունը կարող է բերել շարժի հակադարձման դեպի Թուրքիա:

*Գրաֆիկ 9. Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր (ներմուծում, մլն ԱՄՆ դոլար)*




Ինչպես երևում է գրաֆիկից, թեև աճում են Թուրքիայից ներմուծվող ապրանքների ծավալները, ինչը Հայաստանում եկամուտների աճի արդյունք է, սակայն ավելի արագ տեմպերով աճում է Ռուսաստանից ներմուծումը: Արդյունքում՝ այս ապրանքախմբում տեղի է ունեցել նշանակալի կառուցվածքային տեղաշարժ՝ Թուրքիայից և Ուկրաինայից դեպի Ռուսաստան: Ընդ որում, ռուսական և թուրքական ապրանքները որակով շատ մոտ են և փոխարինման բարձր առաձգականություն ունեն, թեև ռուսականը համարվում է փոքր-ինչ ավելի որակով, ինչն էլ ապահովել է շարժը Թուրքիայից Ռուսաստան: Սակայն դա կայուն երևույթ չի կարելի համարել, և պարամետրերի որոշակի շարժի դեպքում (օրինակ՝ Թուրքիայի հետ սահմանների բացումը) փոխարինման բարձր առաձգականությունը կարող է բերել շարժի հակադարձման դեպի Թուրքիա:

Մեծ կշիռ ունեցող հաջորդ ապրանքախումբը «Պատրաստի սննդի արտադրանքն» է: Ըստ գրաֆիկի՝ այս ապրանքախմբի ներմուծումը 1998-2000 թթ. ունեցել է նվազման միտում, որը փաստում է ներմուծման փոխարինիչների արտադրության ոլորտում մեր երկրում տեղի ունեցող դրական տեղաշարժի մասին: Իսկ 2001-2003 թթ. ընթացքում ապրանքախմբի ներմուծման աճը Հայաստանում եկամուտների աճի արդյունքն է: Ինչպես հստակ երևում է գրաֆիկից, Թուրքիայից և Իրանից «Պատրաստի սննդի արտադրանքի» ներմուծումը նշանակալի կրճատվել է, ինչը կարելի է բացատրել ինչպես ներմուծման փոխարինիչների արտադրության աճով, այնպես էլ Հայաստանում եկամուտների աճով պայմանավորված նոր որակական մակարդակ ունեցող ապրանքների ներմուծմամբ. սպառողների եկամուտների աճի արդյունքում անցում է կատարվել էժան ցածրորակ սննդից համեմատաբար թանկ, առավել բարձրորակ սննդի: Ավելացել են այս ապրանքախմբի ներմուծման ծավալները Գերմանիայից, Ուկրաինայից, Ռուսաստանից, Նիդեռլանդներից, 2003 թվականին՝ նաև Անգլիայից: Ի տարբերություն նախորդ ապրանքախմբի ներմուծման վարքագծի, այստեղ միանգամայն ակնհայտ է սպառողների նախասիրությունների որակական փոփոխությունը՝ պայմանավորված բնակչության եկամուտների աճով, քանի որ անցումը կատարվել է հիմնականում դեպի եվրոպական երկրներ: Դրա հետ մեկտեղ, այս ապրանքախմբի ներմուծման մեջ երկրների թվաքանակի մեծությունը և ապրանքախմբի ընդհանուր ներմուծման մեջ յուրաքանչյուրի ոչ զգալի կշիռը վկայում են, որ ապրանքախումբը բավականին բազմազանեցված է ըստ երկրների (որևիցե երկիր չունի գերակշռող դիրք ընդհանուր ներմուծման մեջ):

*Գրաֆիկ 10. Պատրաստի սննդի արտադրանք (ներմուծում, մլն ԱՄՆ դոլար)*




*Գրաֆիկ 11. Մանածագործական իրեր (ներմուծում, մլն ԱՄՆ դոլար)*




«Մանածագործական իրեր» ապրանքախմբի ընդհանուր ներմուծումը, 1999 թվականից սկսած, աճել է՝ պայմանավորված Հայաստանում եկամուտների աճով: Ներմուծման կառուցվածքում կտրուկ աճել է Իտալիայի կշիռը, 2001 թվականից՝ նաև Բելգիայի կշիռը, տարիների ընթացքում աճի միտում է ունեցել նաև ապրանքախմբի ներմուծումը Թուրքիայից, սակայն համեմատաբար ավելի ցածր տեմպերով:

«Մեքենաներ և սարքավորումներ» ապրանքախմբի ներմուծման մեջ համապատասխանաբար մեծ կշիռ ունեն Միացյալ Արաբական էմիրաթները, Գերմանիան, Ռուսաստանը, ԱՄՆ-ն, Իտալիան և Թուրքիան: Ապրանքախմբի ներմուծման աճը պայմանավորվել է հիմնականում Միացյալ Արաբական էմիրաթներից, Թուրքիայից ներմուծման ծավալների աճով: Նշենք, որ տարեցտարի, թեև փոքր չափերով, աճել է Թուրքիայից ներմուծվող ապրանքախմբի կշիռը: Փաստորեն ՀՀ դրամ/լիրա իրական փոխարժեքի արժեզրկումը այստեղ ազդեցիկ չի եղել, ինչպես նաև Թուրքիան ու Արաբական էմիրաթները Հայաստանի համար մնում են այս ապրանքախմբի գծով ամենաէժան շուկաները: Մյուս կողմից, Եվրոպայի և Թուրքիայի կամ Միացյալ Արաբական էմիրաթների շուկաների ապրանքների գների միջև տարբերությունը բավականին մեծ է, հետևաբար, չնայած եկամուտների աճին, այն բավարար չէ, որ բնակչությունը «եվրոպական» գին վճարի բարձրորակ ապրանքների համար:

*Գրաֆիկ 12. Մեքենաներ և սարքավորումներ (ներմուծում, մլն ԱՄՆ դոլար)*




*Գրաֆիկ 13. Քիմիական արտադրության ապրանքներ (ներմուծում, մլն ԱՄՆ դոլար)*




Քիմիական արտադրության ապրանքների ներմուծման մեջ, 2001 թվականից սկսած, տեղի է ունեցել Թուրքիայի կշռի նվազում, միևնույն ժամանակ աճել են Շվեյցարիայի և Ֆրանսիայի կշիռները: Թուրքիայի կշռի նվազումը կարելի է բացատրել թուրքական արտադրության նմանատիպ ապրանքների ցածր որակով, ինչը և պայմանավորել է անցումը դեպի եվրոպական երկրներ: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ այս ապրանքախմբում ևս առկա է կառուցվածքային փոփոխություն՝ ի օգուտ բարձրորակ ապրանքներ արտադրող երկրների:

Թուղթ և թղթյա իրեր ապրանքախմբի ներմուծման մեջ մեծ կշիռ ունեն, համապատասխանաբար՝ Թուրքիան, Ռուսաստանը և Միացյալ Արաբական էմիրաթները: Գրաֆիկից երևում է, որ ապրանքախմբի կառուցվածքն ըստ երկրների դրսևորել է բավականին տատանողական վարքագիծ (օրինակ՝ 1998 թվականին ներմուծման մեջ ամենամեծ կշիռն ունեցել է ԱՄէ-ը, 1999 թվականին և 2001 թվականին՝ Ռուսաստանը, 2000 թվականին՝ Թուրքիան), որը վկայում է մի երկրից մյուս երկիր անցման բարձր առաձգականության մասին: Այդ իսկ պատճառով դժվար է նկատել այստեղ որևէ միտում և երկրների հետ արտաքին առևտրի վրա ազդող որևէ գնային կամ ոչ գնային գործոն, որը կարող է այլ երկրից ներմուծման պատճառ հանդիսանալ:

*Գրաֆիկ 14. Թուղթ և թղթյա իրեր (ներմուծում, մլն ԱՄՆ դոլար)*




*Գրաֆիկ 15. Իրեր քարից, գիպսից, ցեմենտից (ներմուծում, մլն ԱՄՆ դոլար)*




«Իրեր քարից, գիպսից, ցեմենտից» ապրանքախմբի մեջ մեծ կշիռ ունեցող երկրները Թուրքիան, Իտալիան, Միացյալ Արաբական էմիրաթները, Իսպանիան և Իրանն են: Նշված երկրներից այս ապրանքախմբի ներմուծման աճը գրեթե պահպանում է կայուն միտում, բացի Իտալիայից, որի կշիռը վերջին երեք տարիներին նվազել է: Նման վարքագծի կայունությունը կարելի է բացատրել նմանատիպ ապրանքների՝ ըստ երկրների փոխարինման ցածր առաձգականությամբ, այսինքն՝ երկրների միջև հարաբերական գների փոփոխությունները ապրանքախմբի ներմուծման կառուցվածքային փոփոխությունների չեն հանգեցել, և թուրքական լիրայի նկատմամբ ՀՀ դրամի իրական փոխարժեքի արժեզրկման հետևանքով այս ապրանքախմբի ներմուծման ծավալները չեն կրճատվել: Մյուս կողմից, սպառողների եկամուտների աճը չի հանգեցրել ցածրորակ ապրանքներից բարձրորակ ապրանքների անցման, քանի որ, ինչպես «Մեքենա և սարքավորումներ» ապրանքախմբում, այստեղ նույնպես մեծ են գնային տարբերությունները ցածրորակ և բարձրորակ ապրանքների միջև:

«Պլաստմասսա և դրանցից իրեր» ապրանքախմբի մեջ մտնող ապրանքները հիմնականում ներմուծվում են Իրանից, Ռուսաստանից, Միացյալ Արաբական էմիրաթներից և Թուրքիայից, որոնք, ըստ ենթադրության, փոխարինելի են: Միևնույն ժամանակ, այս ապրանքախմբի ներմուծման մեջ որևէ երկիր չունի գերակշռող դիրք: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ ապրանքախմբում մեծ է մի երկրից մյուս երկիր անցման առաձգականությունը:

*Գրաֆիկ 16. Պլաստմասսա և դրանից իրեր (ներմուծում, մլն ԱՄՆ դոլար)*




Ընդհանրացնելով վերը նշված դատողությունները՝ գալիս ենք հետևյալ եզրակացություններին.

- Դիտարկված տարիներին ՀՀ դրամի իրական փոխարժեքը թուրքական լիրայի նկատմամբ, ինչպես նաև ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքը Հայաստանի մյուս գործընկեր երկրների (առանց Թուրքիայի) արժույթների նկատմամբ ունեցել են արժեզրկման նույն միտումը: Հետևաբար վերջինս թույլ է տալիս ենթադրել, որ Թուրքիայից ներմուծման ծավալների կրճատման վրա գնային գործոնի ազդեցության դերը փոքր է եղել:
- Թուրքիայից ներմուծման կրճատման վրա մեծ է եղել բնակչության եկամուտների աճի ազդեցությունը, որի արդյունքում անցում է կատարվել ցածրորակ ապրանքներից բարձրորակ ապրանքների սպառման: Բացառություն են կազմել «Մեքենաներ և սարքավորումներ» և «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից» ապրանքախմբերը, որտեղ մեծ են գնային տարբերությունները և բնակչության եկամուտների աճը դեռևս բավարար չի եղել, որպեսզի անցում կատարվի ցածրորակ ապրանքից բարձրորակին: Հետևաբար եկամուտների աճը հանգեցրել է այս ապրանքախմբում ցածրորակ և բարձրորակ ապրանքների համամասնական աճի:
- Գրեթե բոլոր ապրանքախմբերում մեծ է ներմուծման բաշխվածությունը երկրների միջև, և Թուրքիան որևէ ապրանքախմբի գծով գերիշխող դիրք չի գրավում: Հետևաբար ենթադրվում է նաև, որ բարձր է մի երկրից մյուս երկիր անցման առաձգականությունը: Այս առումով, կարելի է ասել, որ Թուրքիայի հետ առևտրային հարաբերությունների կարգավորումից և սահմանների բացումից հետո հնարավոր է Թուրքիայից ներմուծվող որոշ ապրանքախմբերի կշռի աճ (օրինակ՝ «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբում):

Այսպիսով, դիտարկված տարիների ընթացքում Թուրքիայից ներմուծվող ապրանքների ծավալները կրճատվել են, քանի որ եկամուտների աճի արդյունքում բնակչությունը ցածրորակ ապրանքների սպառումից անցել է բարձրորակ ապրանքների սպառմանը: Ներմուծման կրճատումը պայմանավորվել է նաև մի երկրից մյուս երկիր անցման բարձր առաձգականությամբ: Նշենք նաև, որ եթե 2005 թվականին Թուրքիայի մակրոտնտեսական զարգացումներում և Հայաստան-Թուրքիա տնտեսական հարաբերություններում էական փոփոխություններ չլինեն, այն է՝ եթե Թուրքիայի գնաճը պահպանվի ծրագրով սահմանված 12% ցուցանիշի սահմաններում, իսկ առևտրաշրջանառության ծավալները, նախորդ տարիների միտումների համաձայն, նվազեն8,

*[8] Քանի որ իրական արդյունավետ փոխարժեքի հաշվարկման ժամանակ վերցվում է գործընկեր երկրների հետ առևտրաշրջանառության 5 տարիների միջին կշիռը, հետևաբար 2005 թվականի համար Թուրքիայի հետ առևտրաշրջանառության միջին կշիռը վերցվել է 1999-2004 թվականների 7%-ի չափով՝ 1998-2003 թվականի 9%-ի փոխարեն: 2% անկումը պայմանավորված է 1998-1999 թվականներին Թուրքիայից ներմուծման ծավալների էական կրճատմամբ:*

ապա, այլ հավասար պայմաններում, ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքը կարժեքավորվի 0.4%-ով: Ընդ որում, Թուրքիայի սղաճի ազդեցությունը կլինի 0.8% արժեզրկման, իսկ փոխարժեքի ազդեցությունը՝ 0.4% արժեքավորման ուղղություններով:

Ավելացնենք նաև, որ սույն հետազոտությունում ներկայացված տեղեկատվությունը պարբերաբար թարմացվելու է, և արդյունքները հետագայում օգտագործվելու են ֆինանսական ծրագրավորման ժամանակ ներմուծման և արտահանման ծավալները ըստ երկրների և ապրանքախմբերի կանխատեսելու նպատակով: Բացի այդ, վերը նշված դատողությունների հիման վրա գնահատվելու են Հայաստանի և Թուրքիայի միջև արտաքին առևտրի զարգացումների հնարավոր ուղղությունները, որի արդյունքում տրվելու է ՀՀ արտաքին առևտրի մեջ Թուրքիայի կշռի աճի կամ նվազման ուղղությունը, որն իր հերթին, այլ հավասար պայմաններում, ազդելու է ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքի վարքագծի վրա:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Causes of inflation in Turkey: A literature survey with special reference to theories of inflation, Aykut Kibritcioglu, University of Illinois at Urbana-Champaign, 2001.
2. IMF working paper “Exchange rate pass-through in Turkey”, Daniel Leigh and Marco Rossi, November 2002.
3. Turkey: 2002 Article IV Consulttion and First Review Under the Stand-By Arrangement-Staff Report, Staff Statement, Public Information notice and News Brief on the Executive Board Discussion , IMF Country Report, July 2002.
4. Turkey: Fifth Review Under the Stand-By Arrangement, Request for Wavier of Performance Criteria and Extension of Repurchase Expectations-Staff Report, Staff Supplement and Press Release on the Executive Board Discussion, IMF Country Report, October 2003.
5. Turkey: Statistical Appendix, IMF Country Report, July 2002.
6. “External Debt and Internal Transfer Problem, The Case of Turkey:1980-1990”, H. Baturalp Candemyr, CBT January 1994.
7. IMF working paper “Leading Inicators of Growth and Inflation in Turkey” Daniel Leigh and Marco Rossi, December 2002.
8. IMF working paper “Would “Cold Turkey” Work in Turkey”, Oya Celasun, R. Gaston Gelos, and Alessandro Prati, March 2003.